

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԳԵՐ. Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

Արտի բեկումով վերահասու եղանք Հայց. եկեղեցւոյ երիցագոյն եպիսկոպոսներէն Գեր. Տ. Տիրայր Արքեպս. Տէր Յովհաննէսեանի մահուան՝ որ տեղի ունեցած է Աւագ Հինգշաբթի օրը, 29 Մարտին, Նիւ Եորքի St. Luke's հիւանդանոցին մէջ:

Հանգուցեալ Արքագանը ծնած է 1867 Սպրիլ 21ին, Ղարաբաղի Բոնակոթ գիւղը: Նախնական կրթութիւնը ստանալէ ետք մտած է Շուշիի վարժարանը եւ ապա աշակերտած է Գէորգեան ճեմարանին, որուն շրջանը աւարտելով անցած է Բեթրսպուրկի համալսարանը, հետեւելով պատմա-բանասիրական ճիւղին: Իր ուսումը շարունակած է նաեւ Փարիզի եւ Լոնտոնի մէջ:

Վերադառնալով Ս. Էջմիածին, եղած է ուսուցիչ Գէորգեան ճեմարանին եւ Երեւանի դպրոցին: Արեղայ ծեռնադրուած է Խրիմեան Հայրիկէն, իրեն օժակից ունենալով մեր եկեղեցւոյ պատմութեան վերջին շրջանի մեծագոյն դէմքերէն Սմնեայն Հայոց երանաշնորհ Հայրապետ Տ. Տ. Գէորգ Զ. Զէօրէքեանը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Երանաշնորհ Հայրապետ Տ. Տ. Գարեգին Ա. Յովսէփեանը:

Ատեն մը վարած է Պետարապոյ թեմին առաջնորդութիւնը եւ Թիֆլիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ տեսչութիւնը: Եղած է նաեւ Էջմիածնի Մայր Աթոռի Դիւանապետ:

1921ին կ'ընտրուի Առաջնորդ Ամբրիկահայոց. պաշտօն մը՝ զոր կը վարէ մինչեւ 1928: Այս շրջանին, Ամբրիկահայ թեմը իր զանազան մարզերուն վրայ կ'արձանագրէ ուշագրաւ նուաճումներ:

Գեր. Արքագանը հմուտ էր, բացի իր մայրենի լեզուէն ֆրանսերէն, գերմաներէն եւ ռուսերէն լեզուներու: Աշխատակցած է զանազան թերթերու, պատմա-բանասիրական նիւթեր մշակելով: Իր գործերէն կարեւորագոյնն է Ֆիլի Դիւանը, զոր լոյս տեսաւ վերջերս Ամբրիկայի մէջ, Հ. Ի. Ը. Միութեան ծախքով:

Հանգուցեալին մարմինը Գ. Յ. Ապրիլին փոխադրուեցաւ Նիւ Եորքի Ս. Խաչ եկեղեցին ուր յաջորդ օրը կատարուեցաւ թաղման կարգը: Վերջին օծումը կատարեց Ամբրիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալֆայեան:

Տէրը թող յաւիտենական հանգիստ պարգեւէ Իր եկեղեցւոյ պաշտօնէի հոգւոյն:

ՀԱՆԳԻՍՏ ԵՐԳԻՆԷ՝ ՄԱՅՐԱՊԵՏ ՕՀԱՆԵԱՆԻ

Կիրակի, 27 Մայիսին, մահացաւ Ս. Աթոռոյ Մայրապետներէն եւգինէ Օհանեան:

Ծնած է Կարին, 1880ին, 1922ին եկած է Երուսաղէմ եւ Արարատեան որբերուն համար Նշա-նակուած է «Մայրիկ»: Որբանոցին փակումէն ետք, ընդունուած էր Ժառանգաւորաց վարժարանի մէջ իբրեւ կարուհի:

Երկարամեայ ծառայութենէ ետք, ծերանալով եւ անկարող ըլլալով իր գործը շարունակել, քաշուած էր Ս. Հրեշտակապետաց վանք, ուր երկարատեւ հիւանդութիւնը օր մը վերջ տուաւ իր կեանքին:

Հանգուցեալը բարի եւ եկեղեցասէր մայրիկ մըն էր:

Յուշարկաւորութիւնը կատարուեցաւ Նոյն օրը կէսօրէ վերջ, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արքահմանին: Ներկայ էր Միաբաններէն մեծ մասը, Յոգնատանջ մարմինը ամփոփուեցաւ Զամ-Թաղի գերեզմանատունը:

Սիոն իր ցաւակցութիւնը կը յայտնէ իր երէցկին աղջկան եւ թոռներուն:

Տէրը թող լուսաւորէ իր հոգին: